

Հաստատված է՝

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան

պետական համալսարան»

հիմնադրամի գիտական խորհրդի

2018թ. հունիսի 22-ի նիստում

Խորհրդի նախագահ՝ ռեկտորի պարտականություններ կատարող՝

Ե.Ս. Սերոբյան



**«ՇԻՐԱԿԻ Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՔՈԼԵԶԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

## ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի (այսուհետ՝ ՇՊՀ քոլեջ) գործունեության ռազմավարական պլանավորումը գործընթաց է՝ նախանշելու, թե ինչ է ցանկանում անել քոլեջը իր առաքելությունը և հիմնական նպատակները հեռանկարում արդյունավետ կերպով իրականացնելու համար: Ապագա միջավայրը առավել նպաստավոր և կանխատեսելի դարձնելու նպատակով քոլեջը մշակել է իր ռազմավարությունը՝ նպատակների, խնդիրների և առանձին գործողությունների ամբողջությունը, որը պետք է ապահովի նրա առաջընթացը նախանշված ուղղություններով:

Ռազմավարական ծրագրի անբաժանելի մասն է կազմում նրա իրականացման ժամանակացույց-պլանը՝ գործողությունների, պատասխանատուների և համապատասխան ռեսուրսների կազմով: Ծրագիրը ենթակա է մշտադիտարկման ու առաջընթացի պարբերական գնահատման և կարող է վերանայվել նոր իրողություններին համապատասխան:

Ռազմավարական ծրագիրը գնահատվում է ամեն տարվա վերջում՝ հենվելով ՇՊՀ քոլեջի տարեկան հաշվետվության, գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ) և այլ վերլուծությունների վրա՝ ձեռքբերումները ամրագրելու, թերացումները վեր հանելու և բարեփոխումները պլանավորելու նպատակով:

Ռազմավարական ծրագրում փոփոխությունները կատարվում են ՇՊՀ-ի քոլեջի մանկխորհի որոշմամբ և համալսարանի գիտական խորհրդի հաստատմամբ: Քոլեջի զարգացման ռազմավարական ծրագրի ելակետը, որպես գլխավոր փաստաթուղթ, ՇՊՀ-ի՝

2017-2022 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրն է:

### 1. ՔՈՒԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Շիրակի պետական համալսարանի քոլեջը ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և մշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Քոլեջը կոչված է ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական կրթական ծրագրերով իրականացվող բարձրորակ կրթությամբ համապատասխան գիտելիքներով ու կարողություններով օժտված մասնագետներ պատրաստելուն՝ համապատասխան որակավորումներով՝ բավարարելով շահակիցների պահանջմունքները և պահպանելով ուսանողակենտրոն միջավայր:

## ՆՊԱՏԱԿ

ՇՊՀ-ի և քոլեջի առաքելությանը համապատասխան արդյունավետ գործունեություն ծավալող, անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներով ապահովված կառավարման համակարգի բարելավում ու զարգացում:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Կառավարման համակարգի գործունեությանը վերաբերող կանոնակարգերի և աշխատանքային պլանների արդյունավետության գնահատում, վերանայում և բարելավում,
2. Կառավարման համակարգի ղեկավարների աշխատանքների իրականացման արդյունավետության պարբերական հաշվետվողականության ապահովում և գնահատում,
3. Մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների ապահովման և տնօրինման քաղաքականության մշակում, պարբերաբար վերանայում և բարելավում:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լրամշակել քոլեջի կառուցվածքային ցանկը՝ ՇՊՀ-ի ռազմավարական նպատակներին համապատասխան:
2. Մշակել կառավարման համակարգի կանոնակարգերի և աշխատանքային պլանների մշտադիտարկման, վերանայման և բարելավման մեխանիզմներ ու ընթացակարգեր:
3. Մշտադիտարկել կառավարման համակարգի կանոնակարգերն ու աշխատակարգերը շահառուների կողմից:
4. Լրամշակել կառավարման համակարգի և քոլեջի կանոնակարգերը:
5. Լրամշակել քոլեջի համակարգի և ղեկավարների պարբերական հաշվետվողականության ընթացակարգ:
6. Լրամշակել քոլեջի ղեկավարների աշխատանքների պարբերական հաշվետվողականության գնահատման մեխանիզմները և գործիքները:
7. Մշակել մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների տնօրինման արդյունավետությունը և հրապարակայնությունը ապահովող մշտադիտարկման մեխանիզմներ և ընթացակարգեր:

## 3. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

## **ՆՊԱՏԱԿ**

Պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու իրենց ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:

## **ԽՆԴԻՐՆԵՐ**

1. Ուսանողակենտրոն կրթական համակարգ ձևավորելու նպատակով յուրաքանչյուր ՄԿԾ-ից ակնկալվող վերջնարդյունքներին հասնելու, դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ապահովում:
2. Ուսումնառության վերջնարդյունքների ձևավորմանը նպաստող գիտելիքների գնահատման ապահովում:
3. Առաջավոր փորձի համեմատական վերլուծություն /բենչմարքինգի միջոցով/ ՄԿԾ-ների համադրության ապահովում:
4. Փոփոխվող կրթական միջավայրի և աշխատաշուկայի պահանջներին համահունչ ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունավետության և գնահատման բարելավման ապահովում:

## **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Մշակել ՄԿԾ-ների վերջնարդյունքներին և դասավանդման արդիականացմանը միտված քաղաքականություն և ընթացակարգեր:
2. Ապահովել ՄԿԾ-ների իրականացման համար անհրաժեշտ պատրաստվածություն և մասնագիտական որակավորումներ ունեցող դասախոսական կազմ, դասախոսակենտրոն համակարգից ուսանողակենտրոն համակարգի անցում:
3. Մշակել ուսումնառության յուրաքանչյուր արդյունքի համար գնահատման չափանիշներ:
4. Մշակել և կիրառել ՄԿԾ-ների որակի մշտադիտարկման, գնահատման ու պարբերաբար վերանայման ընթացակարգեր և մեխանիզմներ:

## **4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ**

## **ՆՊԱՏԱԿ**

Կրթական միջավայրի արդյունավետության ապահովման միջոցով ուսանողներին համապատասխան աջակցության տրամադրում, բարձրացնել քոլեջում ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ուսանողական ծառայություններից:

## **ԽՆԴԻՐՆԵՐ**

1. Ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության հատուկ մեխանիզմների իրականացում:
2. Ուսանողների կրթական կարիքների վերհանում:
3. Ուսանողների արդյունավետ ուսումնառության նպատակով լրացուցիչ ծառայությունների տրամադրում:
4. Ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների բարելավում:

## **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Բարելավել ուսանողների հավաքագրման ընդունելության կազմակերպման մեխանիզմները:
2. Իրականացնել հստակ ուսումնամեթոդական և տեղեկատվական միջոցառումներ:
3. Բարելավել ուսանողների կարիքների վերհանման ընթացակարգերը և մեխանիզմները:
4. Ստեղծել ուսանողների կարիերային նպաստող ծառայությունների կանոնակարգերի պարբերաբար գնահատման, վերանայման և բարելավման մեխանիզմներ:

## ՆՊԱՏԱԿ

Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Արտաքին և ներքին միջավայրի փոփոխվող պայմաններին համապատասխան դասախոսական և ուսումնառական կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականության և ընթացակարգերի շարունակական վերանայում և բարելավում:
2. Յուրաքանչյուր ՄԿԾ-ի արդյունավետ իրականացման համար դասախոսական կազմին ներկայացվող պահանջների և չափանիշների սահմանում:
3. Դասախոսական կազմի պարբերաբար գնահատման մեխանիզմների բարելավում:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ստեղծել դասախոսական և ուսումնառական կազմի աշխատանքի ընդունման և ազատման քաղաքականության և ընթացակարգերի շարունակական վերանայման և բարելավման մեխանիզմներ:
2. Մշակել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ:
3. Մշակել և կիրառել դասախոսների մասնագիտական վերապատրաստման մեխանիզմներ:
4. Մշակել և կիրառել վարչական, ուսումնառական կազմի գործունեության որակի ապահովման ընթացակարգ և մեխանիզմներ:

## **ՆՊԱՏԱԿ**

Մեծացնել քոլեջի գիտական ներուժի ներդրումը տարածաշրջանի տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում, խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքներում:

## **ԽՆԴԻՐՆԵՐ**

Հետազոտությունների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար նպաստող մեխանիզմների և նախադրյալների ստեղծում:

## **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ապահովել դասախոսների և ուսանողների մասնակցությունը հանրապետական և միջքոլեջային գիտահետազոտական նստաշրջաններին, կոնֆերանսներին, սեմինարներին:
2. Իրականացնել որակավորման բարձրացման դասընթացներ:

## **7. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ**



## ՆՊԱՏԱԿ

Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

## ԽՆԴԻՐՆԵՐ

Ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանների բարելավում: Կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան քոլեջի ուսումնական և լաբորատոր բազայի արդիականացում և զարգացում:

ՇՊՀ-ի և քոլեջի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգի ստեղծում և վերջինիս՝ ուսանողների և աշխատողների համար մատչելիության ապահովում:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կատարել քոլեջի լաբորատորիաների, գրադարանի, ուսումնական կաբինետների օգտագործման նպատակների իրականացման համար ռեսուրսների ապահովվածության վերլուծություն, մշակել դրանց արդյունավետության և հասանելիության գնահատման մեխանիզմներ և բարելավմանն ուղղված միջոցառումներ:
2. Հստակեցնել առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններն ապահովող աշխատակիցների աշխատանքային նկարագրերը:

## ՆՊԱՏԱԿ

Աջակցել տարածաշրջանի հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով քոլեջի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Հասարակության հետ կապերի հետագա զարգացման և հանրային ծրագրերում քոլեջի առավելագույնս ներգրավման ապահովում:
2. Մոցիալական պատվերին համահունչ քոլեջում հարատև ուսումնառության համակարգի զարգացում:
3. Հասարակության հետ արդյունավետ հետադարձ կապի ձևավորում:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մշակել և ներդնել շահակիցների հաշվետվողականության մշտադիտարկման ընթացակարգեր և բարելավել մեխանիզմներ:
2. Մշակել և ներդնել հասարակության հետ արդյունավետ հետադարձ կապի հաստատման քաղաքականություն և ընթացակարգ:

## **ՆՊԱՏԱԿ**

Արտաքին կապերի համակողմանի զարգացմանը, փորձի փոխանակմանը նպաստող գործունեության ապահովում:

## **ԽՆԴԻՐՆԵՐ**

1. Արտաքին կապերին, փորձի փոխանակմանը, զարգացմանը նպաստող միջավայրի ստեղծում:
2. Արտաքին կապերի կանոնակարգված գործընթացի ապահովում:
3. Տեղական և միջազգային հաստատությունների ու կառույցների հետ քոլեջի արդյունավետ համագործակցության ապահովում:

## **ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Բարելավել արտաքին կապերին ու միջազգայնացմանը նպաստող ընթացակարգերը և մեխանիզմները:
2. Վերանայել և բարելավել արտաքին կապերի բաժնի գործունեությունը նկարագրող ընթացակարգեր:
3. Ընդլայնել համագործակցության շրջանակները համադրելի առաջատար քոլեջների հետ:

## ՆՊԱՏԱԿ

Քոլեջի բոլոր գործընթացների շարունակական բարելավման ու որակի մշակույթի ձևավորման ապահովում:

## ԽՆԴԻՐՆԵՐ

1. Որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության ապահովում:
2. Որակի ներքին ապահովման գործընթացների համար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործում:
3. Որակի պահովման գործընթացներում սոցիալական գործընկերների ներգրավվածություն:
4. Որակի պահովման ներքին համակարգի պարբերաբար վերանայում:
5. Որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար բավարար հիմքերի ստեղծում:
6. Քոլեջի գործընթացների որակի մասին տեղեկատվության թափանցիկության ապահովում:

## ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մշակել և կիրառել որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության գնահատման ընթացակարգեր և մեխանիզմներ:
2. Վերանայել և բարելավել որակի ապահովման գործընթացներում մարդկային ռեսուրսների ներգրավվածության, ֆիզիկական և նյութական ռեսուրսների բաշխման մեխանիզմները:

